Կոնդ. հիշողության տարրերը

ձայնային եւ նարատիվ ինստալյացիա

Համադրում՝
CSN Lab

Հեղինակներ՝
Արսեն Աբրահամյան
Ինեսա Սահակյան
Ջուլիետա Գրիգորյան

Նախագիծն իրականացվել է «Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիայի» և «Թեք տեղի» համագործակցության արդյունքում՝ Կոնդի փառատոնի շրջանակներում, որը տեղի է ունենալու 2022թ. սեպտեմբերի 10-ին, 17-ին և 24-ին։

TECH DEGH
GOETHE-ZENTRUM KOOPERATIONSPARTNER
GOETHE INSTITUT
CULTURAL & SOCIAL NARRATIVES LABORATORY

հիշողության աշխարհագրությունը

Կոնդը գտնվում է Երևանի հենց սրտում, և Կոնդի մասին հիշողությունները քաղաքի կոլեկտիվ հիշողության կենտրոնական տեղերից մեկն են զբաղեցնում: Երբեմն անցյալը վերհիշելիս բնակիչները կատակում են՝ «Կոնդը միշտ էլ Երևանի մայրաքաղաքն է եղել»: Հիշելով իրենց ընտանիքի, տան, փողոցի, թաղամասի անցյալը՝ կոնդեցիները մշտապես շեշտում են, որ իրենց առօրյան, կենցաղը, իրենց հուշերը անքակտելիորեն կապված են քաղաքի կենտրոնի կյանքի հետ:

Չնայած նրան, որ Կոնդը գտնվում է կենտրոնին բնորոշ քաղաքաշինական թոհուբոհի առանցքում, այն կարողացել է պահպանել նախանցյալ հարյուրամյակի վերնակույսար ճարտարապետությունը, սոցիալական կյանքի յուրօրինակությունները, որ ձևավորվել էին դեռ տասնամյակներ առաջ: Կոնդի կյանքի ռիթմը ասես ալիքի պես տարածվի ամբողջ քաղաքով: Միևնույն ժամանակ Կոնդի հիշողությունը ըստ էության մի կոմպակտ, հաճախ՝ փակ, իր հստակ մտավոր ու ֆիզիկական սահմաններն ունեցող և դրանով իսկ մնացած թաղամասերից տարբերվող համայնքի հիշողությունն է:

Կոնդեցիները իրենց խոսքում թերևս ամենից հաճախ նշում են, թե ինչպես է թաղամասը փոքրացել վերջին տասնամյակների ընթացքում: Եվ այդ ֆիզիկական կարճումը հանգեցրել է նաև տեղի բնակիչների մասնավոր ու կոլեկտիվ հիշողության տարածության փոքրացմանը: Հաճախ այս կամ այն առօրյա պրակտիկաների կամ անցյալի որևէ հիշարժան դեպքի մասին պատմություններ լսելիս կարող է տպավորություն ստեղծվել, թե պատմողը հիշողության բավիղներում թափառելիս կարծես քայլի նաև Կոնդի փողոցներով. մեկ էլ հանկարծ կընդհատի պատմությունը, կանգ կառնի, որովհետև իրադարձությունները շարունակվում էին այնտեղ, որտեղ թաղամասն արդեն կրճատվել է, այն վայրում, որն արդեն կտրվել է Կոնդից և դադարել Կոնդ լինելուց:

Գուցե այս թաղամասը քաղաքի այն եզակի թաղամասերից է, որտեղ այսքան զգալի է ինչպես թաղամասի դիրքի, այնպես էլ փոփոխվող սահմանների ազդեցությունը տեղի հիշողության վրա: «Ի՞նչ է մնացել որ: Կոնդից էլ բան չեն թողել. առաջ շատ ավելի մեծ էր, իսկ հիմա մնացել է իսկական Կոնդի էս մի փոքր կտորը»:

Այսպես ճարտարապետական և ուրբանիստիկ հիշողության ջնջումը գործի է գցում անհատական և սոցիալական հիշողությունը: Տեղի է ունենում հակառակ երևույթը. այն կոնդեցիներին, որոնց մենք այլևս չենք գտնի իրենց տներում, պատկերավոր սկսում են հիշել նրանց հարևանները, որոնք իրենց պատմություններում հասնում են մինչև նրանց տները, տանիքներն ու բակերը:

Կոնդի հիշողության տարածությունը այդպիսի հարատև շարժման ու փոխհատուցումների մեջ է. մեկը փոխարինում է մյուսին, մոռացումը արթնացնում է հիշողություններ, և հակառակը: Ու չնայած այն բոլոր վերքերին, որ թաղամասը ստացել է վերջին տասնամյակներում, այն շարունակում է ապրել ու պահպանել իր յուրահատուկ հիշողությունը, հետևաբար՝ իր ինքնությունը: Իսկ Կոնդի ինքնությունը բլրի վրա է, մեր քաղաքի կենտրոնում, միշտ մեր գլխավերևում:

հիշողության արխիտեկտոնիկան

Այսպիսով, Կոնդի հիշողությունը ենթարկվում է տեղի ռելիեֆին: Կոնդը ոչ միայն կենտրոն է, այլ նաև բարձունք, սար: Այդ իսկ պատճառով տեղի հիշողությունն էլ է այստեղ կառուցվում այս վերև-ներքև, բարձր-ցածր ռելիեֆային հարաբերակցության վրա: Ինչ վերաբերում է կոնդեցիների հիշելու ու մոռանալու յուրահատուկ ռիթմին, ապա անցյալի մասին պատմությունները միշտ իջնում են մզկիթից ու եկեղեցուց վար՝ Ռուսթավելու փողոց կամ կիրճի կողմը: Դա որոշակի ուրբանիստական խտություն է ձևավորում. ինչքան վեր ես բարձրանում, այնքան ավելի

խիտ են դառնում շինությունները, ընտանեկան պատմությունները, ընդհանուր անցյալը: Միաժամանակ հենց Կոնդի ռելիեֆն է սահմանում նաև տների փոխդասավորվածությունը: Տան անցյալի մասին պատմությունները հաճախ կարող են վերածվել բակի մասին պատմությունների, իսկ քանի որ մի տան բակը կախված է մի աստիճան ներքև գտնվող հարևան տան տանիքի վրա, մի փողոցի հիշողությունից մենք կարող ենք սահուն անցում կատարել մյուսին:

Մեր հավաքած բանավոր պատմությունները ցույց են տալիս նաև, թե ինչպես է թաղամասի հիշողության տարածության խտությունը բաշխվում բնակիչների հիշողության մեջ: Նրանցից մեկն, օրինակ, ասում է՝ «մերը Կոնդի եվրոպական հատվածն է», և դրանով ընդգծում, որ մոտ է քաղաքի մնացած մասի հետ սահմանին: Կոնդեցիների հիշողությունները սերտանում են ու խաչվում՝ վարից վեր ընթանալով, և այդ վերընթացում ընտանեկան պատմությունները կանգնում են նույնքան կիպ, որքան հարևան տների միմյանց սերտաճած պատերը:

հիշողության տարրերը

Երևի թե չկա ոչ մի ընտանեկան պատմություն, որում կոնդեցին իր ընտանիքի պատմությունից անցում չկատարի հարևանների անցյալին: Այս առումով Կոնդի հիշողությունը բաց է, ինչպես որ ժամանակին բաց էին լինում կոնդեցիների դռները՝ չկողպվելով նույնիսկ գիշերը:

Հարկ է նշել, որ առօրյա պրակտիկաներից մեկը, որի մասին ասվում է գրեթե բոլոր պատմություններում, ամառվա շոգ գիշերներին բակում քնելու կոնդեցիների սովորությունն է. «Մենք ուղղակի չէինք քնում բակում, հաճախ նույնիսկ հարևանների երեխաներն էին գալիս մեր բակում գիշերը քնելու»: Կոնդի հիշողության տարրերը բխում են բոլորի համար ընդհանուր այդպիսի պրակտիկաներից, որ պահպանվում են ընտանեկան պատմության մեջ: Այն տարիներին, երբ

հեռուստացույցները դեռ տարածված չէին, կոնդեցիները հիշում են այսպես կոչված «Կոնդի կինոթատրոնը»: Դա «տոկատան» հարևանությամբ մի պատ էր, որի վրա ֆիլմեր էին ցուցադրում՝ և որտեղ ամեն երեկո բոլորը հավաքվում էին ֆիլմեր դիտելու:

Ինչպես հաճախ պատահում է, բանավոր պատմությունը ցույց է տալիս, որ տեղի հիշողությունները մանկության մասին պատումների առուներ են: Կոնդի մանկությունը նախ և առաջ խաղերն էին, որ գիտեին թաղամասի բոլոր երեխաները: Մանկության ընդհանուր տեղը բոլոր կոնդեցիների համար զարնանային ջանգյուումն է, ֆուտբոլը, հոկեյն ու դահուկը, որոնց մասին պատմությունները ցույց են տալիս, թե ինչպես է տեղը ձևավորել առօրյան, և հետագայում ինչպես են հիշողությունը «կապել դահուկներից ու դքերով իջել»:

Հիշողության կենտրոնացման կարևորագույն տարրերից են դառնում եկեղեցին ու մզկիթը: Վերջինս լոկալ հետհիշողության նարատիվի առանձնահատուկ տեսակ է. այսօրվա բնակիչներից գրեթե ոչ ոք ներկա չի եղել այն ժամանակ, երբ մզկիթը գործում էր, բայց բոլորի հիշողություններում դրան բավական մեծ կարևորություն է տրված: Իսկ ահա եկեղեցին հանկարծ մեկ այլ տեսակի հիշողություններ է ծնում, որոնցում կարելի է տեսնել թաղամասի անցյալի իդեալականացում. «Առաջ էստեղ միայն հարսանիք էին անում, ուրախություն կար, իսկ հիմա թաղումներ ա»: Կոնդի եկեղեցու նշանակության փոխակերպումն ակնառու է միջին և ավագ սերնդի հիշողություններում: Կոնդի հիշողության տարրերը շարված են տների պատերի մեջ, ձգվում են թաղամասի նեղլիկ փողոցներով, դրանք հնարավորինս վառ ճարտարապետական դրսևորում ունեն, առավելագույն ֆիզիկական արտահայտում: Եվ այդ ճարտարապետությունը ժողովրդական է՝ ստեղծված տեղացիների ձեռքերով ու պատկերացումներով, այն պատկանում է տեղի բնակիչներին, ինչպես որ նրանց լոկալ հիշողությունն է պատկանում այդ ճարտարապետությանը:

ԿՈՆԴԻ ԿԻՆՈ

— Բա կռիշների վրա բարձրանու՞մ էիք հեչ:
— Հա՛, հիմա էլ ենք բարձրանում:
— Չէ՛, իմ ոտը ցավում էր:
— Միշտ ցավու՞մ էր:
— Կռիշ հելնեի ի՞նչ անեի, էն բան երեխեքն էին հելնում կռիշ-մռիշ, կռիշի վրա կինո էինք նայում՝ Կոնդի կինոն:
— Կոնդի կինոն ո՞րն ա:
— Հեն ա, ընդե ա:
— Կինոյի հայաթը:
— Բացօթյա կինո կար չէ՞, հեն ա, ընդե ա, երկու հարյուր մետր էն յան: Հնդկական կինո էր տարվա սկզբին, տարվա վերջին էլ էլի հնդկական կինո էր: Լացելով գալիս էինք տուն:
— Էնտեղ միացնում էին, դուք բարձրանու՞մ էիք...
— Հա, ընդեղ՝ տոկատան կռիշը, հեն ա, երևում ա, սենց որ նայես է՞ն ծերը, ընդե՝ դպրոցի հենց վերջում, տոկատան կռիշն ա: Ըտեղ բարձրանում էինք, դե էն վախտ երեխա էինք, փող չունեինք: Եռսուն կոպեկ ո՞վ կտար մեզի, որ ամեն օր կինո նայեինք, էն ա հելնում, սիրուն պառկում, նայում էինք էժան և որակով:
— Փաստորեն, ոտքը էդքան էլ չի ցավացել...

ԽԱԿԵՅ

— Բա ի՞նչ էիք դուք խաղում:
— Խակե՛յ:
— Խակեյ որտե՞ղ էիք խաղում:
— Հես ա, բա էդ դպրոցի հայաթը... էտի հիմա ա, որ նենց ծառ ա աճել, էն վախտ նորմալ դպրոցի բակ էր, ամեն ինչ կար... Էհ, նայի՛, հիմա ծառեր ա աճել: Էս ծառները չկային...
— Բա դպրոցը երբվանի՞ց չի աշխատում:
— Չորրորդ տարին ա:
— Փակ չէր էդ դպրոցի բակը, բաց էր... հետո շթեր կար,բասկետբոլի բաներ կար, ամեն ինչ էլ կար:
Կանսեռվի բանկեն դնում էին փեդերի վրա բան էինք սարքում... կլյուշկա... Խաղում էինք:
— Հա՛, սառույցը պարտադիր չի փաստորեն:
— Էն վախտ հո չկա՞ր տենց գնդակ կամ կլյուշկա: Մենք էինք սարքում:
Հետո կանկա գիտե՞ս ոնց էինք քշում... էդ սանկեքը: Կոշիկի տակից հանում էինք, խփում էինք փետերի տակը, դքերից

իջնում էինք:
— Տղա ջան, էն թվերին մարդիկ ասֆալտի վրա լիժա էլ էին քշում:
— Հա՛, դիքը որ իջար, ձմեռը ըտեղ չէիր կարա իջնեիր. էնքան ձուն էր գալի, էնքան էին երեխեքը սանկա-մանկա քշում, լիժա, էն բաներից... սառուց էին անում:

ՍԱՂ ԱՇԽԱՐՀԸ ԵՐԵՎՈՒՄ Ա

— Ըտե մի՛ նստի, անհարմար կլնի, էն քոթուկին նստի:
Պապիս որ ծնվավ, էս տունը կար, ու ստե ոչ մի բան չենք փոխե, մենակ պատերն ենք ներկե ու վայո, ընգեր: Էս պատերը, էս ինչ կա նույնն ա, ուղղակի լաքել ա պապաս, որ սիրուն լինի: Որ խոսքի տուրիստ-մուրիստ գան, մեկ էլ տենան պատի միջից տառական հելավ, չեն զզվի՞: Կզզվեն, էլ չեն գա, չէ՞: Լաքել ա... էս սաղ հիմա նույնն ա...
Ստե առաջ թուրքեր են ապրել: Մեջիթի կեսն ա եղել էսի: Մեջիթը իրեք հատ մաս ունի. մեկը էս ա, մեկը մի հատ ընդե կա, մի հատ դպրոցի հայաթը՝ էդ քո ասած, մի հատ էլ, էն Չկալովը գիտե՞ս, Չկալով 53, ըտե կա... մեջիթի կեսը: Որ մեջիթը կիսեցին, արդեն ըստե հնդիկներ էին ապրում... հետո արդեն ստե մենք ապրանք...
— Էդ երբվանի՞ց:
— Պապիս յոթանասուերկու տարեկան ա... ըրը...իրանք եկել են քնավեց տարեկանում: Էդքան հին ա: Հետո արդեն որ...
Էսի, ընգեր, մերը չէր: Մենակ էն կոմի տունն էր, մենք ընդե ունեինք: Էսի մերը չէր, բայց հետո տատիս ու պապիս փող հավաքեցին, հետո էս առան:
Կուզե՞ս հանեմ մի հատ վերև...
— Ի՞նչ կա վերևը:
— Վերևը մեր քնելու տեղն ա, բայց ընդեղ բալկոն կա [որտեղից] սաղ աշխարհը երևում ա, կուզե՞ք՝ հելնեք: Զգույշե՛ք, եկե՛ք, արի՛, ընգեր... Հես ա, նայի՛, ընգեր... սա՜ղ... հլը արի՛ էս կողմ, արի՛ էս կողմից, որ լավ տենաս... արի՛, ընգեր, ուղիղ հլը նայի՛... արի՛ ստեղ ու ուղիղ նայի՛... Նայի՜, Արարատն էլ ա երևում...

ԳՎԱՐԴԻԱ-ԳՎԱՐԴԻԱ

— Կռիվ-կռիվ էին անում՝ թաղ-թաղ...
— Դուք հարս եք եկել, բայց ամենալավը դուք գիտեք:
— Գվարդիա-գվարդիա կար, իրար հետ կռվում էին: Հիմա ո՞նց են Հայաստանն ու Ադրբեջանը կռվում, այ տենց բոյ էին տալի:

Ձենքերով, փեղերով,մահակներով...
— Կայարանի թաղի երեխե՞քը...
— Երեխեքը ռազբոռկա էին անում կոնդեցիների հետ: Կոնդեցիները՝ ուրիշ թաղերի հետ՝ տրամվի պարկի հետ... այ տենց... Լա՜վ ջարդում էին իրար զենքերով, մանդիրովկեքով: Տենց մեկն էլ կար,մի խուլիգան, հես ա, նստած ա իմ տղես:
— Բա էդ ռազբոռկեքը որտե՞ղ էիք անում:
— Որդե պատահի:
— Իջնում էին ձոր: Էն կինոն չե՞ս տեսել: Վայ որն ա՞ ...Մեր բակը, որ ասում ա իջնենք ձոր ռազբիրատ անենք: Այ տենց ռազբիրատ էին անում: Հիմա էլ են անում: Էլի յոթ հարկանի հայհոյանքները տալիս են՝ նույն ձևի: Կոնդի սերունդը էլի նույն ձևի մեծանում ա:
— Կոնդեցիք հայհոյանք չէին տալիս:
— Յաաա՜հ, կողքից էիք անցնում:
— Էտի կարող ա Կայարանում ա եղել, բայց Կոնդում՝ չէ...
— Ստեղ էլ էին անում: Մոր բերանի կատլետը, ծակ ատամն ու տենց շարունակական:
— Ստե կուլտուրական ժողովուրդ են...
— Տո լա՞վ է, կուլտուրան ձեզնից էր հելե:
— Եկար զարգացար Կայարանից:
— Աշկիդ ա երևում:

ՇԻՐԱԶԵՆՑ ԲԱԿՈՒՄ

— Թե հմի էս մարդկանց ճակատագիրը ի՞նչ կլնի, էդ էլ պարզ չի:
— Ի՞նչ եղավ եկեղեցու մոտ: Մինչև հմի փողոցները թափառում են: Արդեն քսան տարի:
— Է հա բա, ութանասունութ թվից մարդիկ մեռան-գնացին, իրանց թղթերն էլ կորավ:
— Այ էն էլիտար շենքը, որ կառուցում են, նույն ճակատագրին ես էլ պիտի արժանանամ...
-Եկեղեցու մոտի էլիտար շենքը, ըտեղ էլի մեր նման մարդիկ էին ապրում: Քանդեցին, որ պիտի ըտեղից իրենց բնակարան տային: Տվեցին վարձով մի տարվա փող, գնացին էդ մի տարին վարձով ապրեցին,ու դրանից հետո՝ ոչ մի գումար: Հիմա էդ շենքը հլը կառուցված չի:
— Էդ մարդիկ փողոցներն են:
— Կեսից շատը մեռել են:

ՋՐԻ ՀԵՐԹ

Հիշում եմ՝ երեկոները հավաքվում էինք, գիդե՞ս ինչ ուրախ էր: Հավաքվում էինք, նստում էինք ամբողջ հարևանությամբ՝ էս բոլորը-բոլորը: Ամենքը մի բան իրանց տնից բերում էին, նստում էինք, ուտու՛մ, խմու՛մ, ուրախանու՛մ: Է՞ն շռայլությունները չկար, բայց ուրախ կյանք էր, ու իրար շատ լավ հասնում էին: Մեկին մի բան պակաս լիներ, մեկը հիվանդ լիներ, անմիջապես…

Մենք երբեք դուռ չենք փակե ու քնե: Մենք սաղս օբշի հայաթներում էինք քնում: Մի ժամանակ ասում էր՝ էտ դռան վրա բաներ են դնում՝ նայեն՝ ո՞վ ա, նոր դուռը բացեն: Ասում էի՝ մենք տենց բաներ չենք անում, մենք նույնիսկ հայաթում քնում ենք, հարևանը գալիս ա, մեր վրով անցնում ա, գնում ա զուգարան: Բոլորի դռները բա՛ց, բոլորը բա՞ն ...Իսկ հիմա մարդիկ, ասում են, նույնիսկ ոչինչ էլ չունեն, բայց փակում են, վախենում են:

...

Պահածոներ էինք փակում, մեկս մեկին օգնում էինք: Էն մեկն ասում էր. «Ես իկռա եմ սարքում», էն մեկն ասում էր. «Բադրիջան—պամիդոր ենք խորովում, փակում»: Մեկս մեկին օգնում էինք, մաքրում էինք, կրակը սարքում էինք, դե զազ-մազ չկար էդ ժամանակ:
Օրինակ մենք՝ էսքան հարևանությունս, միշտ իրա հայաթից ենք օգտվե: Ինքը շատ բարի կին էր: Մարդ ու կին էին, ոչ մի բան չունեին: «Մեծ օջախ» էր կոչվում. օջախ էր սարքած: Մենց ղազանները դնում էին, մեկը իկռա էր սարքում, մեկը լոբի էր փագում, սենց մեկս մեկին օգնելով, բա՛:

...

Էստեղ, որտեղ նստել ենք,կռանթ էր, էս տունը չկար, ես նոր եմ էտի սարքել: Ներքևի հարևաններին ջուր չկար: Առավոտյան ժամը վեցին ջուր էին տալիս: Գալիս էին, վեդռոներով սաղ ստեղ նստում էին հերթ. «Օլյա, կոֆե դիր, գալիս ենք հերթի»: Ասում էի. «Չէ՛, կոֆեն դուք բերեք, ես բաժակները կտամ»: Սպասում էինք, որ ջուրը տան, որ ամեքը հերթով [լցնեն] ...Դու էրկու վեդրո լցրեցիր, որ մյուսը արդեն Օլյան պտի լցի, արդեն պտի Անոն լցի: Ամեքը՝ սկզբից էրկու վեդրո: Հետո հերթը պրծնում էր, նորից կրկնում էին: Այ էդ ձևի ապրում էինք ու շատ երջանիկ [էինք]:

...

Ուրախ էր մի տեսակ: Ճիշտ ա՝ ամեն ինչ դժվարությունով էր, բայց ուրախ կյանք էր, ուրախ էինք: Իսկ ինչ վերաբերվում ա,նորից եմ ասում, Կոնդին, մենք շա՜տ ենք սիրել ու մենք նույնիսկ, սկզբից [երբ այլ տեղերում] տներ էին տալիս, իմ ամուսինը, իմ էրեխեքը ասում էին. «Չէ՛, մենք տեղում ենք ուզում: Մենք չենք ուզում մեր էս շրջապատը, էտ ընկերությունը, էտ հարևանությունը թողենք, գնանք ուրիշ տեղ տուն ստանանք»:

ԿՈՆԴԻ ԿԵՆՏՐՈՆԸ

Էն ժամանակ Կոնդի կենտրոնը էղել ա ստեղ: Սպասի, էրկու, ըրը՜, էրկու հարուր քառասուն համարը: Էսենց որ մի քիչ գնում ես, մի հատ կռանթ կա, ու էսենց աթոռ ա դրած [այդ տեղը] կոչվում էր «Կոնդի կենտրոն»: Որ ասում էին, ասում էի՝ 240, որտև էտ, հե՞նց էտ տան կողքն էին հավաքվում: Էդ տան հենց դիմացն էր էդ պլաշադկեն, կոչվում էր 240, «240-ում ենք հավաքվելու»: Տան համարով գալիս էին տղերքը, իրիկունները հավաքվում էին:

...

Ձու էին [խաղում] հետո Զատիկի օրերը, բա՞ն, սենց գլխարկների մեջ դնում: Սա՜ղ ջահելությունը էդ կենտրոնում հավաքվում էին, ձու էին խաղում, եսիմ ինչե՜ր, էտենց: Հիմա էլ են մեկ-մեկ հավաքվում,նստում, բայց առաջ ավելի բան էր, ուրախ էր: Կառտ էին խաղում, ենթադրենք, շախմատ էին խաղում, էդ նարդի էին խաղում: Իսկ հիմա էնքան տներ են սարքե, արդեն փողոցն էլ են անցե: Մեծությունը չկա, էդ պլաշյադկեն չկա: Հետո փայլեվան էր գալիս ստեղ: Խփում էին էդ էրեխեքը էդ բանը՝ աթոռները, վերցնում, գնում, նստում էին ու նայում էին: Էդ օրը սա՜ղ Կոնդը, սա՜ղ, էսենց պուճուրա էրևում չէ՞, բայց գիդե՞ս քանի տնտեսություն կա, սա՜ղ գնում էին: Մեկը մեկին արդեն ասում էր. «Գիդե՞ս, փահլևան ա էկել, դավա՜յ, գնացինք»: Հետո մանկական այգում էին շատ դնում էդ փահլևանին: Էլի սա՜ղ Կոնդը ընդեղ էր, սա՜ղ Կոնդը:

...

Միշտ ձոր ենք տարել, ներքևը՝ այգի: Չէինք վախենում, ազա՜տ: Հարևանը գնում էր էրեխեքին լցում էր մեքենայի մեջ, տանում էր, թողում էր այգում, խաղում էին, իրիգունը գնում, հավաքում բերում էր:

— «Հոլ» եմ խաղացել, «Չլիկ դաստա» եմ խաղացել,«Լախտի» եմ խաղացել,«Էշ միլիցա» եմ խաղացել,«Պախկվոցի» եմ խաղացել,«Գործագործ» եմ խաղացել,«Պարան» եմ խաղացել, «Յոթքար» եմ խաղացել:

...

Առաջ իմ ախպերս, վա՛յ, Մանուկը, հիշում եմ, աղչի՛,ներկում էր իրան, սև շորեր էր հագնում ընգնում էր սրա տնից նրա տուն,գժվցնում էինք հարևաններին,վախացնում էինք, սենց սև շորեր էր հագնում Մանուկը, ու ընգնում էինք տնետուն, ըտենց սաղի տները, վախացնում էինք էլի: «Ջանգյուլում» եմ խաղացել,այո, «Ջանգյուլում» գիտե՞ք ինչ բան ա,ըրը…մայիսին ա կարծեմ, մոռացել եմ ուղղակի, չեմ կարողանում դաժը հիշեմ, մայիսի վերջերին, ըրը ընում էր էդ Ջանգյուլումը: Ուրեմն, էդ Ջանգյուլումի ժամանակ, ուրեմն մի հատ սենց իմ նման սիրուն բանի էին էլի, էրեխու էին վեկալում, ու հարս էին սարքում, ինքը պտի պարեր: Առավոտ շուտ՝ ժամը վեցին, գնում էինք, վոբշմ, դուռը ծեծում էինք հարևանների, ընում էին, վոբշմ, դուռը ծեծում էինք այսինքն: [Երգում էինք. «Ջանգյուլում կասե՛մ-կշարե՛մ, Ջանգյուլում ջա՜ն-ջա՜ն»: Գալիս էին քո տուն, չէ՞, դու հանում ես, ասենք, փող ես տալիս ,փող էլ էին տալիս, փող ա, ձու ա, կանֆետ ա, հաց ա, էս ա, էն ա, ու տենց հավաքում էին,դե ամբողջ Կոնդը հսկայական տերիտորիա ա, չէ՞,իջնում էին ներքև, էրեխեքը իջնում էին ներքև՝ էն ավտոներին, պահում էին, փողեր էին տալիս:

— Էդ որտե՞ղ:

— Պրոսպեկտ, Պրոսպեկտ էին իջնում: Ըտենց, փողը հավաքում էինք, էթում էինք բաներ... Հետո, մեծերը գնում էին ուտելիք էին առնում,բերում էին մեկի տունը, հավաքվում էին, նստում էինք, ուտում-խմում, քեֆ անում, ուա՛յ, տաշի՛-տուշի՛:

—Հետո բան էինք անում, վիճակ էինք հանում, մի հատ գիրք կար, էդ գրքի մեջ դու կոճակ էիր քցում...

—Բարև ձեզ,

— Բարև, ազիզ ջան: Էն մեկը չգիդեմ ինչ էր քցում, տենց սաղ քցում էին մեջը, ու յոթ օր հետո ջուր էին գնում գողանում. լուռումունջ, յոթ աղբյուրից ջուր պետք ա գողանայինք, լուռումունջ էնքան պտի [դիմանայինք]: Որ գալիս էին, ընգնում էին, խոսացնում էին, խփում էին՝ պտի ձեն չհանեիր:

Ընենց մի շաբաթ դնում էինք էդ, մնում էր էդ բանը՝ էդ կոճակները մեջը: Կուվշին կար, էդ կուվշինի մեջ էինք քցում ընե՞նց սկսում ես, պտտացնում էիր, մեջից հանում էիր կոճակը, կարդում էր, թե, ասենք, էդ տվյալ անձնավորությանը ի՞նչ ա սպասվում: Երանի էդ օրերը, երնեկ հիմա էլ ըլներ:

ՇՈՂԻԿԻ ԶՈՒԳԱՐԱՆԸ

— Ասում ա,- Կենտրոնը ո՞րն էր,- ասում էմ,- Շողիկի զուգարանը:
— Լենինի հրապարակը:
— Ոնց որ Լենինի արձանը լիներ:
— Տատիդ, հիշու՞մ ես, միշտ ասում էր, ըհը, էս էլ մեր ու բոլո՜ր տաքսիստներին ասում էր. «էս էլ մեր Լենինի հրապարակը»: Լենինի արձանն ա էդ զուգարանը. մի հատ սենց զուգարան էր կենտրոնում սենց կայնած: Սաթիկ էր անունը, գնաց արդեն, ստեղից գնաց: Մտնում էր զուգարան, երգում էր բանը. «Ու՞ր ես գնում, դու իմ հրեշտակ՝ նազենա՜զ- նազենա՜զ»: Զուգարան էր նստում [ու] երգում էր:

ՃԱՄԲԱՐ

— Ստեղ ճամբարներ ա էղել, ճամբար էին կազմակերպում:
— Իսկականից, շա՜տ լուրջ էին վերաբերվում էդ ճամբարին: Լուրջ համերգներ էր լինում, մրցում էին կողքի հայաթի հետ՝ ո՞ր խումբն ա լավ երգում, լավ արտասանում:
— Ռո՛զը,բանը, Ռոզն եմ ասում, Վարդուհին,
— Ինձ ասում են նախշուն բաջի [երգում է],
— Ղարաբաղի նախշուն աղջիկ [երգում է],
— Բաջի ա,
—Բաջի ա, աղջիկ ա...
— Ինձ ասում են՝ վեր կաց պարի, բոյի՜դ մատաղ, վեր կաց պարի [երգում է]:
— Մի հատ այ սենց փեդ էինք տնգում, այ սենց, էդ փեդի վրա տարբեր տեղերից սենց կա՞ էն թղթերը, գունավոր թղթերը, սենց կտրտում էինք ու բանը, ոնց ասեմ, դրոշակի նման ընեեե՞նց անում էինք, գնում մի հինգ-վեց հատ էդ փեդի վրա կապում էինք, ու ըլնում էր արդեն ճամբար՝ բակային ճամբար էր ըլնում: Ասենք, հիմա մենք, մեր բակային ճամբարը կա, մենք իրիգունը ա՛յ էս ժամերին, հե՞նց էս ժամերին արդեն [սկսում էինք]: Գիտե՞ս ինչ, մինչև էդ փորձեր էինք անում: Ասենք, ես էնքան պարտաճանաչ էի, ազնիվ խոսք: Հիմա ես եմ, դու ես, մի իրեք-չորս հոգով էս ինչ բանը պետք ա արտասանենք, մյուս խումբը պետք ա, ասենք, ոտանավոր ասի, մյուս խումբը ասենք պետք ա պարի: Մեծեր կան, խաղեր կան, խաղեր էին կազմակերպում, տենց օրներս անցնում էր: Մի երկու-իրեք ժամ, պատկերացնում ե՞ս: Մարդի՛ք, ա՜յ էն ծերից մինչև այստեղ լի՜քը լցվում էին, ոնց որ հանդիսատես: Իրանք իրանց աթոռներով, փոքր տաբուրյետկաները վերցնում էին, գալիս էին, այ սենց նստում էին, նայում էին:

ՀԱՎԸ

— Վա՛յ, մտավ, ըրը...
— Կայնե՛ք ըտե, կայնե՛ք ըտե...
— Առաջ չգա՛ս...
— Ըհը, ֆայո, ըտե կայնե՛ք:
— Ազիզ ջան, դուք էլ եկեք էս կոմ: Այ սենց, տենու՞մ ես, կես դրույքով գայիշնիկ ենք աշխատում
— Բարև:
— Բարև, Անո ջան, բարև:
— Ժամը վեցից հետո, ժամը հինգ անց կեսից հետո սկսվում ա իմ ու Ծուշոյի աշխատանքը, մենակ էն փեդերից չունենք միլիցեքի:
— Հարուր տարի առաջ իմ պապաս ըստեղ ա ծնվել՝ Կոնդում՝ հե՞նց ըստեղ: Իմ պապիկս ա եկել Թուրքիայից, փախել է ջարդի ժամանակ, փախել ա եկել ա ստեղ, բնակվել ա: Հայրիկս ըստեղ ա ծնվել: Էդ Դվինը, որ նոր սարքում էին, իմ հայրիկս տեղ աշխատել ա, դաժը գործ ուներ ըտեղ՝ շատ սիրուն մի հատ քանդակ էր արել ինքը:

...
Առաջին ծելեվիզոը մենք ենք ունեցել՝ «Գարիզոնտ», մե՛ծ, էսքա՞ն յաշիկ, էսքա՞ն էր: Դրել ենք դուրսը, դնում էինք դուրսը: Աշ պապաս հանում էր դուրսը, դնում էր Բուլվարը, Բիձեքի բուլվար ունեինք, ֆուտբոլ էին նայում, ամբողջ հարևանությունը հավաքվում էր ֆուտբոլ էին նայում: Բիձեքի բուլվար էր կոչվում, ըտենց էինք ասում: Ուղղակի ընենց տարածք էր. սենց բաց, ոչ շատ մեծ էր, ոչ շատ փոքր էր: Ըտեղ նստում էին բիձեքը՝ այսինքն մեծ տարիքով մարդիկ, հավաքվում էին ըտեղ, նստում էին, «Դամա» էին խաղում, «Նարդի» էին խաղում, «Կարթ» էին խաղում, ըտենց էր կոչվում: Հետո իրանցից հետո նստում էր արդեն իրանցից փոքր երիտասարդությունը:

...
— Մենք հավ ենք ունեցել, հավ ենք պահել: Հավ էր գալիս մեզի ամեն նոր տարուն հյուր, իսկականից, գիտե՞ս, գալիս էր, ըտենց էր, մի քանի տարիներ մեկ էլ տեսար հավը գալիս էր մեզի հյուր, ու պրծ, էտ էր: Նոր տարուց առաջ՝ մի քանի օր առաջ, գալիս էին ըտենց հավերը: Մենք էլ մորթում էինք, ուտում էինք:
— Բայց ու՞մ հավն էր
— Բա չգիտեմ՝ ում հավն էր, ես ի՞նչ իմանամ՝ ում հավն էր,

— Տերը չէր եկե՞լ:
— Չէ՛, դե ի՞նչ, իրանք էլ չգիտեին, որ մեր մոտ էր:
— Վա՜, էրեխե՜ք, ստե ըտենց բաներ չկար առաջ: Առաջ սաղ մեկը մեկի տնով ապրում էր:
— Մորթում էինք, ուտում էինք, հետո ուրախանում էինք, տաշի՜-տուշի՜ անում վոբշմ:
— Մեր Կոնդում սկի հարևանների տները արգելված չի. կարանք գնանք, դուռը բացենք, մտնենք, քունս տանի՝ քնենք:
— Օրինակ՝ Գալուստը, չէր էթու՞մ բանենց տունը քնում, բանենց՝ էն Աստղիկենց:

ԼԱԽՏԻ

— Կարմիր կոճակ, փչացած հեռախոս:
— Այգեպանը հավաքեց բոլոր մրգերից բացի Արմանուշից:
— Սիրահարվեցի:
— Ու՞մ վրա:
— Բայց ես էտի չգիտեմ:
— Իյաաա՜:
— Դուք լավ մանկություն չեք ունեցել, տիկի՛ն:
— Իյաաա՜, «Էշ միլիցա» խաղացե՞լ ես:
— «Էշ միլիցա» խաղացել եմ:
— Հալամուլա խաղացե՞լ եք:
— Հա՜, բա ո՞նց:
— «Բիլիարդ» խաղացե՞լ եք:
— Հա՛, հորքուր, բիլիարդը մեր հայաթն ա էղե, սաղ Կոնդը մեր հայաթն ա բիլիարդ խաղացե:
— «Լախտի» խաղացե՞լ եք, հա՞:
— Ի՞նչ:
— Լախտի: Լսի, ուրեմն մի հատ սենց մե՜ծ շրջանակ ես գծում ու դայիշները որ կա է՝ էն ուժեղ դայիշները, ա՛յ սենց շարում էիր էն կլորների մեջ, ու դու կայնում ես վրեն, ա՛յ սենց՝ ոտերը բաց, ու կանգնում ես վրեն:
— Դուրսը, էդ հակառակորդը, դու ընենց պետք ա անես, որ չթողնես ինքը էդ դայիշը վերցնի: Դայիշը, որ հանում ա, վերցնում, փախցնում ա, ինքը սկսում ա դրանով քեզ խփել: Բա՜: Հետո, որ ասենք թռնում ես չէ՞, դու ես իրան ծեծում:
— Բա ձմեռը, գիտե՞ք ինչ հետաքրքիր ձմեռներ ենք ունեցել:
— «Լոտո» էինք խաղում, լոտո:
— Բոլորը գալիս էին այստեղ, կռիշներից լցնում էինք...

Այ, որ սենց մեջտեղը կանաչ գունդ ա է,ըտեղ լյուկ ա, դրա վրա տռամպլին էինք սարքում...
— Էդ մեր տռամպլինն էր:
— Որ գային սանկեքով քշեին:

ԲՈԲԻԿ

— Օգոստոսի տասերկուսին ամբողջ հարևանությունով գնում էինք [եկեղեցի]:
— Տասնմեկի գիշերը, որ ֆռում ա տասերկու, գնում էինք [եկեղեցի]:
— Արդեն հենց անցնում, ու հավաքվում ենք [որ գնայինք]: Բայց մենք ժամը իրեքին էինք գնում, Շուշ:
— Գիշերվա իրեքին ստեղից ոտով գնում ենք Նորք: Տարիքն էլ կապ չունի, էրեխեք:
— Մեծ-փոքր, էրերխա, ջահել-ահել, սաղ, գնում էինք:
— Ոտով գնում էինք մինչև նորք—Մարաշ, Սուրբ Մարիամ, հա՛, Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին, ըտեղ:
— Ու մարդիկ ոտաբոբիկ, նպատակ են պահում, գնում են:
— Ես մինչև նախանցյալ տարի եմ գնացե՛լ: Էլ չեմ գնում. չեմ կարողանում: Իմ ման յոթը տարի գնացել ա, յոթը տարի, ու ամեն տարի՝ ոտաբոբիկ: Ոտաբոբիկ էլ հետ էր գալիս:
Ախպորս էրեխուն տարել էինք հետներս, պուճուր էր՝ մի տարեկան չկար,ուրեմն սենց արեց, ասեց, ինձ ասեց,- «Ծու՛տ արեք, մի հատ տաքսի բռնեք»,- ասեց,- «էրեխուն վեկալեք, դուք գնացեք տուն, մենք հետո կգանք»: Լցվանք էդ տաքսին, լիքը լցվանք, էրեխուն թողինք, մենք տաքսին նստանք: Վա՛յ, աղչի՛, գոռում ա. «էրեխեն ու՞ր ա, էրեխեն ու՞ր ա»: էրեխեն մնացել էր ընդե: Աղչի՛-աղչի՛, լավ ա չսպանեց մեզի:

ԱՐՏԵՄ ՉՅԱՉՅԱՆ ՈՒ ՍԱՇԻԿ ՊԱՊԱՆ

— Գիտե՞ս, ինչ եմ միշտ լսել, որ Կոնդը Երևանի մայրաքաղաքն ա: Ես տենց գիդեմ: Մնացածը թող իրանք որոշեն, թե ինչն ինչոց ա: Կոնդի մայրաքաղաքն էլ Արտեմիս բուդկեն ա:
— էդ ի՞նչ ա:
— Պիվի բուդկա էր, հիմա չկա:
—Բա էդ որտե՞ղ էր էդ բուդկեն:
— էդի էն կողմն էր:
— էն զիբիլի ամանների մոտ:
— Ըտեղ մի հատ Արտեմ ձաձա էր, էնքա՞ն լավ մարդ էր: Պիվա էր ծախում՝լցնովի պիվա էր, ի՞նչ համով էր, վա՛յ: Էդ մի իրեք

լիտրանոցով բերում էի, էն փրփուրը որ կար, ասում էի. «ի՞նչ կլնի, պապա ջան, էդ տուր խմեմ էլի»:
— Հենց փրփու՞րը:
— Հա՛:
— Տալի՞ս էին:
— Բա ի՞նչ էին անում, հլը փորձեին չտային:
— Չէր էթա էլ բերեր:
— Հա՛:
—Կիսմեր նոր կգար:
— Հետո Սաշիկ պապին ունեինք, Սաշիկ պապան, ինքն էլ մառոժնի էր վաճառում: Ինքը բան ուներ՝ կաշկա ուներ, երեխեք, էդ կաշկով գալիս էր: Էս ան... Տենայիր ի՞նչ մի հատ ինչ իրարանցում էր ստեղ կատարվում, որ Սաշիկը գալիս էր: Ու սաղս պապա էինք ասում էս Սաշիկին: Մի հատ էրեխա կար, [մի անգամ] գոռաց. «Մամա՛, Սաշիկ պապան էկավ»:
[Մաման ասեց.] «Քո ազիզը թաղեմ, ի՞նչ պապա, հերդ չի,աղջի»:
[Երեխան ասում էր,-] Պապան եկա՛վ, Սաշիկ պապան եկա՛վ,-[մաման էլ ասում էր,-] վա՛յ, քո ազիզը թաղեմ: Էնքա՞ն էինք ծիծաղում:

ՖՈՒՏԲՈԼ

— Գալիս էին ստեղ էլ էին ֆուտբոլ խաղում: Սուրիկը, որ ասում եմ, լավագույնն էր խաղում,[ֆուտբոլի] չտարան՝թարգեց: Սուրիկը ոնց որ մեծ թիմ[ում] հմի խաղում ա: Մինչև չխփեին-քցեին, չէին կարա գնդակը խլեին: Բոբիկ գրազ էկավ էն բանի հետ, Խալ Վարդան ենք ասում մենք,Վարդանի հետ մի յաշիկ պիվի վրա, ասեց [ու] հինգից հինգ խփեց: Ոչ մի մեր ֆուդբոլիստ հենց հմի էլ տանես, սկի պենալը չեն կարում խփեն: Մի խոսքով, ախպերն էլ ընենց ֆիզիկապես պինդ [էր], Գոջի էինք ասում: Ռուսի խառնուրդ էին իրանք: Ուրեմն, «Մանկական» գնալուց, «Սպարտակ» կինոն, որ նայում էին, ոգևորված, ֆիզիկապես էդ պինդ տղան սաղին լարում, բասեյինից քցում էր ջուրը, ասում էր. «Թռե՛ք ստից, «Կիլիկիա» եք, ստե չերևաք, էսի կոնդեցիների տեղն ա»: Քցում էր ջուրը: Հետո, որ գալիս էինք, հանգարց իրանք տասը հոգի [էին լինում], մենք՝ էրկու-իրեք, մեզ ասում էր. «Դուք առաջ ընգած վազեք, տես ինչ եմ անում էս տաս հոգուն ես»: Մենակ է... Տալի մի էրկուսին նակաուտ էր անում, վազում էինք մենք ահագին առաջ: Ինքը վազում էր, իփռ թե հայ-հայա հասնեն, կանգնում մյուսներին տալի նակաուտ [էր] անում:

ՁՈՐ

— Կոնդում բոլոր, մեր փողոցի մանավանդ տղաները, իմ հասակին կամ հետոյի, հավաքվում էինք առավոտները, վազելով գնում Մանկական այգին: Էրգեսն էր և Զանգուն: Ու ըտենց Էրգեսխ էինք] քցվում... Նախ ֆուտբոլ էինք խաղում, պարտադիր ֆիզկուլտուրա [էինք անում]: Գնում էինք ըրը՞ մինչև երկրորդ կայարան, ընդե բասեյինում լողանում, գալիս [էինք]: Դպրոցի հետևը կար բասկետբոլի շիթեր, ընդեղ էինք սաղ օրը ֆուտբոլ խաղում: Կոնդում՝ էդ բասեյինում, ու Չռիկը, որ ասում են մեծահասակ, փոքրահասակ, տասնութ պլյուս կամ ընենց հավաքվում էին ընդե՝ լողանալու: Էդ Չռիկը, [ոնց որ] որ հմի մաքուր ջուրը գեղնի տակից, խմելու ջուր ա, դրանով ջրվում էր նաև բասեյինը: Հմի Զանգուն կեղտոտել են էդ ռեստորաններով: Առաջ ըտենց չէր. լա՜վ մաքուր, լա՜վ հաճելի տերիտորիա էր:

ԿՈՒՍԸ

— Սուրճ չխմե՞նք:
— Ըհը:
— Չէ հա, ի՞նչ սուրճ. կռիս կա մեր տանը:
— Ձեր տանը՞:
— Հա՜:
— Բարև Ձեզ: Ո՞նց թե կռիս կա, գնա ասա. «Ծու՛տ դուրս արի, քեզ ասում եմ, թե չէ շիրեն կդնեմ, կսատկես, մեղկ ես»:
— Կռիսը եկել ա կռիսի մոտ:
— Ծանթի[մոտ], էսքան կատուներ կան, մեկին առ քից ըտե. կամ կատուն կսատկի, կամ [կռիսը]:
— Կռիսը կատվից չի վախենում:
— Հիշում ե՞ս, ստե տուալետն էր: Էն ժամանակվա տուալետը էսքան ծակ ուներ, փեղով փագում էինք: Բանշիտն ասեց. «Լապատկեն տուր, դուռը փագի վրես»: Տենամ ղժու՜մ ա, ասում ա,- «Բա՛ց»,- ասում եմ,- «Սատկացրիր, չէ՞»,ասում ա,- «Բա՛ց»: Բացեցի, մի կերպ փախավ, ասում ա. «Արա՛, ատամները բաց թռնում էր վրես, ի՞նչ ես ուզում, լապատկեն ձեռս՝ հազիվ պաշտպանվում էի»: Վերջը փախավ էտի, տեսավ, որ ծակը փագ ա, չի կարա:

ԴԵՂԱՏՈՒՆ

— Գրադարան էր, պոչտա էր մեկ էլ ապծեկա ըտեղ: Ապծեկան էլ պուճուր ապծեկա էր, բայց ապծեկա եմ ասել, ապծեկա էլի: Իսկական ապծեկա էր: Դեմն է գրադարանն էր: Չգիտեմ՝ տենց թողեցի՞ն, չգիտեմ՝ ինչ արեցին, ո՞վ ա առե, ի՞նչ ա արե: Էն վախտ գնում էիք էդ Կոնդի ապծեկայից ռեզին էինք առնում, ռազատկա էինք սարքում: Հետո իրիս էին ծախում. Էն վախտվա իրիսը, էն իսկական իրիսը, իրիս էր, ոչ թե հիմիգվա ապծեկաների իրիսը: Սենց մտնում էիր էդ ապծեկա, սենց հոտ էր գալի ապծեկայի՝ իսկական: Էտ իրա բաները, էդ փայտի տենց էտաժեռկեքը, ինքը էս ձևի չէր, ապակիներով էլի, բայց ամեն ինչը տեղը տեղին էր: Հին բան էր, բայց նենց հետաքրքիր էր:

...
Մենք իջնում էինք էս հիվանդանոցի բակից... ծառեր կան՝ ծիրանի, խաղողի, թթի: Ես սենց բարձրանում էի, էդ ցոգոլը սենց լցնում էի սենց ծոցս, ըտեյի պահակը գալիս էր, լուրջ եմ ասում, գալիս էր, կանգնում էր ծառի տակ, ասում էր. «Իջի»: Ասում էի. «Հեսա մի հատ է, մի հատ է քաղեմ՝ նոր»: Իջնում էի, ինքը ներքևը կանգնած էր, որ ես իջնում էի դե նենց էի անում, որ ինքը չբռներ ընձի: Թռնում էի, փախնում էի ու գալիս էի տուն: Բերում էի, ցոգոլ էինք ուտում: Խաղողները քաղում էի, ճթերը ա՜յ էսքան, ու ինչ ասես քաղում էի ըտեյից:
— Էս Պարոնյան փողոցով տրամվայ էր գնում, իսկ մինչև տրամվայ քցելը, ըտեղ բաղեր էին՝ Կարենենց բաղերը:
— Ձմեռը գնում էինք, էն որ մութ-ցուրտ տարիները, որ սենց չկար վառելիք, բան, բակից ծառ էինք կտրում: Դաժը ոստիկանության աշխատողները գալիս էին, ասում էին,- Էս ի՞նչ ես անու՞մ,- ասում էի,- ծառ եմ կտրում, չես տենու՞մ:

ԱՎԵԼԻ ՎԱՅՐԻ

— Ստեղի մարդիկ ուրիշ մթնոլորտի մարդիկ են: Հետո՝ էս վերևը՝ ուրիշ... էս խիտ բնակչությունը ոնց որ ավելի ուրիշ ձևի էին մեծանում: Մեկի տունը՝ տան պես, մի ամանից կարող ա հաց ուտեն: Էս կողմի էրեխեքը մի քիչ ուրիշ ձևի են՝ ստե մի քիչ ավելի վայրի են: Դե էսի սարի գլուխն ա: Ընդեյի էրեխեքը մի քիչ ավելի խելոք են, ստե՝ մի քիչ ավելի վայրի էլի, ավելի աշխուժ են, շատ են...Ստե առավոտը լուսը բացվում ա, էնքան ձեն ես լսում, իսկ ընդե կարող ա խախանդ [լինի] մարդկանց հայաթում...

Լուսը բացվում էր, ամառվա սեզոնին երազում էինք իջնեինք ձոր, մտնեինք ջուրը,լողանայինք: Գետի վրա սղիկ կար՝ մամուռով սղիկ էր, մի քառասուն մետր: Սենց պդի սղալո՜վ էթայիր ընգնեիր ջուրը, կամ էլ դիֆտը դնում էիր սղալո՜վ, էդ մամուռներով ա՜յ սենց դիք էր: Տե՞նց էթում էիր... մի հատ գեր[ան], բան[ը] մի հատ սենց կլո՜ր բան էինք սարքե, դրա վրո՜վ, սե՞նց խփվելով էթում էիր մինչև էն յան: Տուրիստները որ գալիս էին, նայում էին սենց, նկարում էին. թե բա «էս ովքե՞ր են»: Հեդո՝ կայնած պդի իշնեիր: Տո էնքա՞ն մարդ ենք փրգե լողանալու ժամանակ:

Էդ կանալը խոսում էր: Ասում էր. «Մի՛ լողացեք»: Ուրիշ տեղից գալիս էին, գլուխ էին գովում: Ասում [էիմնք. «Ընգեր,մի՛ լողացի, չես կարա, ընդեյից պտի պարանից բռնես, հելնես,հենց պարանից չբռնես՝ կեթաս կխեղդվես»: «Ինձ մի՛ սովորացրեք»,- լոճվում էին, բան, ես ասի. «Դե լավ, ապեր ջան, գնացի, թռի՛»: Տենում ես բլթբլթում ա: [Մտածում էինք.]« Արա, ի՞նչ անենք»: [Վերջը ասում էի.] «Թռե՛ք, լավ»: Մի իրեք—չորս հոգով թռնում էինք, մազերից բռնում էինք, քցում էինք պատին: Կարող ա մի քանի հատ լավ չափալախ տայինք, հետ էինք բերում ասում էինք. «Դե ռադներդ քաշեք, մեզի պդի մատաղ անեք»: Խեղդվում էին: Էնքան մարդ ենք փրգե՝ շատ-շատ: